



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ԾՐԱԳԻՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԱԽԱԲԱՆ</b>	<b>2</b>
<b>ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</b>	<b>4</b>
1. Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում .....	4
2. Սակագնային քաղաքականություն .....	8
3. Լիցենզավորման գործընթաց.....	11
4. Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների մոնիթորինգ.....	13
5. Կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի համաձայնեցում և գնումների մոնիթորինգ.....	16
6. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն .....	19
7. Հանձնաժողովի հիմնական գործունեության ընթացիկ ուղղություններ .....	22
<b>ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ</b>	<b>25</b>
1. Էներգետիկայի բնագավառ .....	25
1.1 <i>Մեծածախ շուկայի մասնակիցների հարաբերությունները կարգավորող գործիքների կատարելագործում.....</i>	<i>25</i>
1.2 <i>Մատակարարների և սպառողների հարաբերությունները կարգավորող գործիքների կատարելագործում.....</i>	<i>27</i>
1.3 <i>Վերականգնվող էներգետիկայի բնագավառի զարգացման միտումները .....</i>	<i>29</i>
2. Ջրային ոլորտ.....	30
3. Հեռահաղորդակցության բնագավառ .....	31
<b>ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ</b>	<b>35</b>

## ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝

հանձնաժողով) Էներգետիկայի, հեռահաղորդակցության, փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման մասով), երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառներում և ջրային ոլորտում կարգավորող մարմին է, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» ՀՀ օրենքներով և ՀՀ ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներն են.

- սակագնային քաղաքականության վարչություն
- ֆինանսական վերլուծության վարչություն
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն՝
  - իրավաբանական և դատական սպասարկման բաժին
  - լիցենզավորման բաժին
- զարգացման և մոնիթորինգի վարչություն՝
  - տնտեսագիտական բաժին
  - տեխնիկական բաժին
- հեռահաղորդակցության վարչություն՝
  - կարգավորման քաղաքականության բաժին
  - ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժին
- դիմում-բողոքների քննարկման և նիստերի նախապատրաստման բաժին
- տնտեսական բաժին
- ներքին աուդիտի բաժին
- անձնակազմի կառավարման բաժին
- հաշվապահական հաշվառման և սոցիալական ծրագրերի իրականացման

բաժին

- ընդհանուր բաժին

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը համակարգում էն հանձնաժողովի անդամները և աշխատակազմի ղեկավարը՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն:

## **ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

### **1. Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում**

Հանձնաժողովի կարևորագույն գործառնություններից է կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումը՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության ու շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման և կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից:

Հանձնաժողովը մշտապես համագործակցում է պետական կառավարման տարբեր մարմինների հետ՝ հանրային ծառայությունների ոլորտը կարգավորող օրենսդրությունը կատարելագործելու և հանրության համար կարգավորման թափանցիկությունն ապահովելու, սպառողների կամ կարգավորվող անձանց նկատմամբ խտրականությունը բացառելու, սպառողների և կարգավորվող անձանց շահերը հավասարակշռելու, ինչպես նաև մրցակցային շուկաների զարգացմանը համընթաց՝ կարգավորման շրջանակները սահմանափակելու ու կարգավորման գործիքները կատարելագործելու նպատակով:

2015 թվականի ընթացքում հանձնաժողովը՝

- գործուն մասնակցություն է ունեցել ջրային ոլորտում հանձնաժողովի կարգավորման գործիքների արդյունավետության բարձրացմանն ուղղված ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխությունների կատարման աշխատանքներին.

- մասնակցել է «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» և «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքներում համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի մշակման աշխատանքներին, որոնցով առաջարկվում է ապահովել վերականգնող էներգետիկ ռեսուրսների օգտագործող ինքնավար էներգաարտադրողների և էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի միջև էլեկտրաէներգիայի փոխհոսքերի իրականացումը, և կարգավորման դաշտից հանվել են վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող էլեկտրական էներգիա արտադրող այն ինքնավար էներգաարտադրողները, որոնց տեղակայանքների դրվածքային հզորությունը չի գերազանցում 150 կՎտ-ը.
- մասնակցել է Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամացության շրջանակում իրականացված աշխատանքներին, այդ թվում՝ փաստաթղթերի, տեղեկանքների մշակման, քննարկման, ուսումնասիրության, դիրքորոշման ներկայացման ուղղություններով.
- մշակել է էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության (կոգեներացիոն) էլեկտրակայանների համար նոր շուկայի կանոններ և էլեկտրական էներգիայի առուվաճառքի պայմանագրի նոր օրինակելի ձև:

Կարգավորվող բնագավառների (համակարգերի) իրավական դաշտի կատարելագործումը շարունակական գործընթաց է և հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից մեկը: Այս առումով հանձնաժողովը 2016 թվականին՝

- շարունակելու է ոլորտի կարգավորման կատարելագործմանն ուղղված քաղաքականությունը.
- նոր միջոցներ է ձեռնարկելու կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող անձանց և սպառողների միջև փոխհարաբերությունների կարգավորման ոլորտում խնդիրների վերհանման, դրանց իրավական կարգավորման գործընթացին վերջիններիս ներգրավման համար, որը հնարավորություն կընձեռի գնահատել, ձևավորել ընդհանուր մոտեցումներ,

առաջադրված խնդիրների լուծման համար կիրառել միասնական մեխանիզմներ և մեթոդներ.

- հետամուտ է լինելու պետական այլ մարմինների հետ փոխգործակցության և փոխօգնության ամրապնդմանը.
- իրավական ապահովման, դատական սպասարկման, վարչական վարույթի իրականացման ոլորտներում ապահովելու է գործերի քննության բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունը.
- ապահովելու է էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջերմամատակարարման ոլորտները կարգավորող իրավական ակտերի և շուկայի կանոնների՝ տեխնոլոգիական զարգացմանն ու իրավակարգավորման արդիականացման պահանջներին համապատասխանեցումը.
- ապահովելու է հանձնաժողովի գործունեության թափանցիկությունը, հանրության համար տեղեկատվության հասանելիության մակարդակի բարձրացումը.
- գործուն մասնակցություն է ցուցաբերելու կարգավորման խնդիրների լուծմանը նպաստող ծրագրերի, իրավական ակտերի մշակմանը և իրականացմանը.
- կատարելագործելու է լիցենզավորված անձանց գործունեության մոնիթորինգի մեխանիզմները,
- նախաձեռնելու է կարգավորման ոլորտի կատարելագործմանը նպատակաուղղված ուսուցողական և վերապատրաստման դասընթացների, գործուղումների կազմակերպում.
- կազմակերպելու է կարգավորման ոլորտում միջազգային համագործակցության, փորձի փոխանակման գործընթաց:

Հարկ է նաև նշել, որ ջրային համակարգում հանձնաժողովին ՀՀ օրենսդրությամբ վերապահված կարգավորման իրավասություններն էականորեն տարբերվում են էներգետիկայի բնագավառում վերապահված իրավասություններից: Համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի՝ հանձնաժողովն իրականացնում է սակագնային

քաղաքականություն և ոչ մրցակցային ջրամատակարարներին տրամադրում ջրային համակարգի օգտագործման թույլտվություններ: Իսկ էներգետիկայի բնագավառում, որպես կարգավորմանը բնորոշ գործառույթներ, հանձնաժողովին են վերապահված նաև մատակարարման և օգտագործման կանոնների, մատակարարման պայմանագրերի օրինակելի ձևերի սահմանումը, ինչպես նաև դրանք խախտելու դեպքերում ընկերություններին պատասխանատվության ենթարկելու գործիքները և իրավասությունը, ինչն առավել ամբողջական և արդյունավետ է դարձնում կարգավորման համակարգը:

«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2015 թվականի հունիսի 23-ին ընդունված ՀՕ-108-Ն օրենքի համաձայն՝ 2016 թվականից ջրային համակարգի օգտագործման թույլտվությունների տրամադրման փոխարեն ջրային ոլորտում ներդրում է լիցենզավորման գործընթաց և հանձնաժողովին են վերապահվում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների, ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերի օրինակելի ձևերի սահմանման, ջրամատակարարող ընկերություններին տրամադրվող լիցենզիաների պայմանների վերահսկման, խմելու ջուր մատակարարող իրավախախտ անձանց նկատմամբ տուժանքների կիրառման իրավասություններ՝ ապահովելով համապարփակ կարգավորում իրականացնելուն ուղղված ամբողջական գործիքակազմ:

Նշված փոփոխություններով պայմանավորված, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությունը նախատեսում է Հայաստանի Հանրապետության տարածքում ջրամատակարարման ծառայությունների մատուցումը վերապահել մեկ օպերատորի, հանձնաժողովը 2016 թվականին պետք է իրականացնի բավական ծավալուն աշխատանքներ՝ նոր լիցենզավորման կարգի և լիցենզիայի պայմանների, ջրամատակարարման և օգտագործման կանոնների, մատակարարման պայմանագրերի նոր օրինակելի ձևերի և կարգավորման առնչվող այլ փաստաթղթերի մշակման և կիրարկման նպատակով:

## 2. Սակագնային քաղաքականություն

Սակագնային կարգավորումը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա և նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը:

Հիմք ընդունելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի սակագնային մարժայի և մյուս ընկերությունների սակագների հաշվարկման մեթոդիկաները, հաշվի առնելով էլեկտրաէներգետիկական համակարգի 5 խոշոր արտադրող կայանների, էլեկտրաէներգիայի հաղորդման, հաշվարկային կենտրոնի և բաշխման ծառայություններ մատուցողների ներկայացրած սակագների վերանայման հայտերը, էլեկտրական էներգիայի 2015-2016 թվականների սպառման և համապատասխան էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության հաշվեկշռի վերաբերյալ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կանխատեսումները, արտարժույթի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի արժեզրկումը, էլեկտրաէներգետիկական համակարգում իրականացված ներդրումների վերլուծության արդյունքները և մի շարք այլ գործոններ, հանձնաժողովը 2015 թվականի օգոստոսի 1-ից վերանայել է էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների սակագները:

Արդյունքում՝ 2015 թվականի օգոստոսի 1-ից գործողության մեջ են մտել նոր սակագներ ինչպես արտադրող կայաններից առաքվող էլեկտրաէներգիայի և էլեկտրաէներգետիկական համակարգին ծառայություններ մատուցող ընկերությունների, այնպես և վերջնական սպառողների համար:

Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում տեղի ունեցող տատանումների ազդեցությունը վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայանների գործունեության վրա հնարավորինս մեղմելու և նշված տատանումների արդյունքները կարճաժամկետ հեռանկարում՝ 6-ամսյա պարբերականությամբ, սակագնում արտացոլելու



նպատակով 2015 թվականին վերանայվել է վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկան, ինչպես նաև այդ կայաններից առաքվող էլեկտրաէներգիայի սակագները:

Համաձայն վերոնշյալ մեթոդիկայի՝ մինչև 2016 թվականի հունիսի 1-ը, հաշվի առնելով դրամի փոխարժեքի տատանումները և սղաճի փոփոխությունները, սահմանված կարգով կճշգրտվեն փոքր հիդրոէլեկտրակայաններից և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները: Այս գործընթացը կրում է պարբերական բնույթ և իրականացվում է յուրաքանչյուր տարի:

Յուրաքանչյուր տարի՝ մինչև տարեվերջ, ուսումնասիրվում և հաստատվում են էլեկտրական էներգիա արտադրող խոշոր կայանների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացվող պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները:

2015 թվականի փետրվար ամսին վարձակալության 10-րդ պայմանագրային տարվա համար սակագների ճշգրտման առաջարկով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով էր դիմել «Երևան Ջուր» ՓԲԸ-ն՝ բազիսային սակագներում հաշվի առնելու մանրածախ ջրամատակարարման ծավալների, տարեկան սղաճի, ՀՀ դրամ/եվրո փոխարժեքի և ընկերությանը մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների փոփոխությունները: Ելնելով սակագնի ճշգրտման մեթոդաբանությամբ ամրագրված բոլոր գործոնների ազդեցության հանրագումարից՝ ընկերության հայտով ճշգրտված մանրածախ սակագինը հաշվարկվել էր 172,632 դրամ/խմ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը)՝ գերազանցելով գործող սակագինը (170.256 դրամ/խմ) 2.376 դրամ/խմ-ով: Սակայն, հաշվի առնելով «Երևան Ջուր» ՓԲԸ-ի գրությամբ ներկայացված՝ իր բաժնետիրոջ՝ «Վեոլիա» ընկերության, սակագներն անփոփոխ թողնելու վերաբերյալ առաջարկությունը, հանձնաժողովը վերահաստատել է «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից ջրամատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցման գործող սակագները:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, հաշվի առնելով միջազգային խորհրդատվական կազմակերպության ուսումնասիրության արդյունքները և ներկայացված առաջարկությունները, սահմանել է, որ «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերը և այլ գույքը դիտարկվում են որպես միասնական գույքային համալիր, որի օգտագործումն ու պահպանումը 2017 թվականից իրականացվելու է մեկ կառավարչի կողմից՝ 15 տարի ժամկետով վարձակալության տրամադրելու միջոցով: Նշված գույքի օգտագործման իրավունքը վարձակալության փոխանցելու գործընթացը կազմակերպելու նպատակով ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որի աշխատանքներում իր գործուն մասնակցությունն ունի հանձնաժողովը, և որին աջակցելու նպատակով ներգրավվել է նաև միջազգային խորհրդատու:

Միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքները կավարտվեն «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերը և այլ գույքը, որպես միասնական գույքային համալիր, 2017 թվականից վարձակալության տրամադրելու նպատակով միջազգային մրցույթի կազմակերպմամբ, որի արդյունքում հանձնաժողովը խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցման ոլորտում կիրականացնի նոր սակագնային քաղաքականություն և կսահմանի այդ ծառայությունների մատուցման մրցույթի արդյունքներով ձևավորված նոր սակագներ:

«ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից մատուցվող սակագնային կարգավորման ենթակա ծառայությունների համար սահմանված սակագնային փաթեթներն ընդլայնելու և բաժանորդներին իրենց կարիքներին համապատասխան սակագնային փաթեթեր ընտրելու հնարավորություն ընձեռելու նպատակով՝ ըստ անհրաժեշտության սահմանավում են սակագնային կարգավորման ենթակա ծառայությունների այլընտրանքային սակագնային փաթեթներ:

Հանձնաժողովը պարբերաբար իրականացնում է նաև «ԱրմենՏել» ՓԲԸ-ի անհրաժեշտ հասույթի վերլուծություն, ուսումնասիրում էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների շուկաներում տեղի ունեցող զարգացումները և անհրաժեշտության դեպքում վերանայում «ԱրմենՏել» ՓԲԸ-ի նկատմամբ կիրառվող սակագնային քաղաքականությունը և սակագնային կարգավորման ենթակա ծառայությունների ցանկը:

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից ելնելով՝ նախատեսվում է ճշգրտել և հաստատել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2016 թվականի անվանական կազմը և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան մեծությունները: Այս գործընթացը կրում է պարբերական բնույթ և իրականացվում է յուրաքանչյուր տարի:

### **3. Լիցենզավորման գործընթաց**

Հանձնաժողովի կողմից իրականացվող լիցենզավորման գործառույթը հնարավորություն է տալիս մրցակցության բացակայության կամ սահմանափակ մրցակցության պայմաններում կարգավորվող բնագավառներում գործունեություն իրականացնող ընկերությունների համար գործունեության միասնական չափանիշների սահմանման միջոցով հավասարակշռել սպառողների և այդ ընկերությունների օրինական շահերը, կարգավորման դաշտում գործող տարբեր ընկերությունների համար վարել միատեսակ քաղաքականություն, ինչպես նաև լիցենզավորված գործունեության մոնիթորինգի միջոցով պատասխանատվության միջոցներ կիրառել իրենց պարտականությունները ոչ պատշաճ կերպով կատարող ընկերությունների նկատմամբ:

2015 թվականի հունվարի 1-ից մինչ սեպտեմբերի 1-ը էներգետիկայի բնագավառում տրամադրվել են՝

- Հայաստանի Հանրապետության էներգահամակարգի վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակի ժամանակ

Վրաստանի Հանրապետությունից էլեկտրական էներգիայի (հզորության) ներկրման լիցենզիա.

- «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ի, Հայաստանի Հանրապետության, «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի, «ՔոնթուրԳլոբալ Տերրա Հոլդինգ Էս-Ա-Էր-Էլ» և «Սի-Ջի Սոլյուշնս Գլոբալ Հոլդինգ Քամփնի» ընկերությունների միջև 2015 թվականի հունիսի 8-ին ստորագրված գույքի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրվել է Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրը կազմող «Սպանդարյան», «Շամբ» և «Տաթև» հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա.
- հողմային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության մեկ լիցենզիա.
- փոքր հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության 5 լիցենզիա:

«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության դիմումի համաձայն ուժը կորցրած են ճանաչվել 1999 թվականի հունիսին ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) և ջերմային էներգիայի արտադրության լիցենզիաները՝ հաշվի առնելով, որ «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի հին էներգաբլոկները ֆիզիկապես մաշված են (շահագործման մեջ են եղել 40 տարուց ավելի՝ նախագծային 30 տարվա ռեսուրսի փոխարեն), և դրանց արդյունավետության աստիճանի բարձրացմանն ուղղված ցանկացած ներդրում ընկերության կողմից գնահատվել է ոչ նպատակահարմար և հետագա շահագործումը՝ անարդյունավետ:

Դադարեցվել են նաև փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության մեկ և փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման (վերականգնման) փուլում գտնվող 4 լիցենզիաներ:

Վերոնշյալ ժամանակահատվածում երկարաձգվել է էներգահամակարգի վթարային իրավիճակների ժամանակ Վրաստանի Հանրապետություն էլեկտրական

Էներգիայի (հզորության) արտահանման լիցենզիան: Գազի արտահանման ազգային իրանական և «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից «Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագրի իրականացման համար երկարաձգվել են «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Իրանի Իսլամական Հանրապետությունից բնական գազի ներկրման և Իրանի Իսլամական Հանրապետություն էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման լիցենզիաները:

Երկարաձգվել են նաև էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիաներով ամրագրված՝ կառուցման փուլում գտնվող 11 փոքր հիդրոէլեկտրայանների և մեկ հողմային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածները:

Իրականացվել է էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջև կնքված, ինչպես նաև էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման և արտահանման 334 պայմանագրերի իրավական փորձաքննություն և գրանցում:

Կարգավորվող բնագավառներում գործունեության լիցենզիաների, թույլտվությունների տրամադրման և էներգետիկայի բնագավառում պայմանագրերի իրավական փորձաքննության գործընթացը կշարունակվի նաև 2016 թվականին:

#### **4. Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների մոնիթորինգ**

Կարգավորվող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի սահմանված ցուցանիշների պահպանման գործընթացը մշտապես գտնվում է հանձնաժողովի ուշադրության կենտրոնում՝ ինչպես կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող տեղեկատվությունների վերլուծության, այնպես և ընտրանքային կարգով տեղերում իրականացվող ուսումնասիրությունների միջոցով: Այս գործիքակազմի կիրառմամբ հանձնաժողովը մշտապես բարձրացնում է իր կողմից իրականացվող մոնիթորինգի աշխատանքների արդյունավետությունը:

Հանձնաժողովն էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերություններից եռամսյակային պարբերականությամբ տեղեկատվություն է ստանում սպառողների սպասարկման որակի փաստացի

ցուցանիշների վերաբերյալ: Մասնավորապես՝ մշտական մոնիթորինգի են ենթարկվում՝

- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների՝ սպառողների մատակարարման ընդհատումների քանակի և տևողության ցուցանիշները,
- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողների դիմումներին (բողոք, հարցադրում) պատասխանելու ժամկետները,
- առևտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում էլեկտրական էներգիա և բնական գազ մատակարարող ընկերությունների կողմից կատարված վերահաշվարկները և հաշվարկված տույժերը:

Սպառողների սպասարկման որակի սահմանված ցուցանիշներից շեղումների դեպքում մատակարար ընկերությունների հետ պարբերաբար իրականացվում են առկա խնդիրների կարգավորմանն ուղղված քննարկումներ, մշակվում են միջոցառումներ՝ նման խախտումները հետագայում բացառելու նպատակով: Հարկ է նշել, որ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը եռամսյակային կտրվածքով հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Միևնույն ժամանակ, հանձնաժողովն իր գործառույթների տիրույթում հետևողական քայլեր է ձեռնարկում ջրամատակարարման ոլորտում գործող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի պայմանների մոնիթորինգի ուղղությամբ:

2015 թվականին պարբերաբար ուսումնասիրվել են «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից հրապարակված գրաֆիկների և փաստացի ջրամատակարարման տևողության ցուցանիշները: Բացի այդ, հանձնաժողովը, տեղեկատվության հավաստիության ուսումնասիրության նպատակով, «Լոռիջրմուղկոյուղի», «Շիրակջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների սպասարկման տարածքներում գտնվող

ընդհանուր թվով 67 համայնքների ղեկավարներից հարցում է կատարել ջրամատակարարման տնօրության փաստացի ցուցանիշների վերաբերյալ: Հարցումների արդյունքների ամփոփման աշխատանքները կավարտվեն մինչև ընթացիկ տարվա ավարտը, իսկ արդյունքների վերաբերյալ 2016 թվականի սկզբին կհրապարակվի համապատասխան վերլուծական տեղեկանք:

Էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողների դիմումների (բողոք, հարցադրում) քննարկումը հանձնաժողովի կողմից սահմանված սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բաղադրիչ է և, բնականաբար, մշտապես վերահսկվում է՝ կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող տեղեկատվության վերլուծության և ընտրանքային կարգով տեղերում իրականացվող ստուգումների միջոցով: 2015 թվականին հանձնաժողովի որոշումներով էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների համար սահմանվել են տեղեկատվության ներկայացման նոր կարգեր: Վերլուծության արդյունքներն ամփոփելուց հետո, հանրությանն իրազեկելու նպատակով, ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունները եռամսյակային արդյունքներով հրապարակվում են հանձնաժողովի պաշտոնական կայքի համապատասխան բաժնում: Էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողների դիմումների՝ սահմանված ժամկետներում և գործող իրավական ակտերին համապատասխան քննարկումը 2016 թվականին նույնպես գտնվելու է հանձնաժողովի ուշադրության կենտրոնում:

Հանձնաժողովը մշտապես հետևում է նաև նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացին: 2015 թվականին իրականացրած ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ ընկերությունը որոշ դեպքերում չի ապահովել նոր սպառողների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման գործընթացը: Նշված խախտումների համար ընկերությունը 2015 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ արդեն իսկ ենթարկվել է տուգանքի՝ 60 մլն ՀՀ դրամի չափով, իսկ առկա խնդիրների կարգավորման նպատակով տրվել են

համապատասխան հանձնարարականներ:

2016 թվականի ընթացքում հանձնաժողովը կշարունակի սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող տեղեկատվության մոնիթորինգի աշխատանքները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վարչարարությունը՝ իրենց պարտականությունները ոչ պատշաճ կատարող ընկերությունների նկատմամբ:

#### **5. Կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի համաձայնեցում և գնումների մոնիթորինգ**

Հանձնաժողովի գործառույթներից իր կարևորությամբ առանձնանում է էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացը, այդ թվում՝ ընկերությունների ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ համապատասխան վերլուծական տեղեկանքների կազմումն ու հրապարակումը: Նշված աշխատանքների իրականացումը կարևոր է սակագներում ներառման ենթակա ներդրումների օգտակար և օգտագործվող ծավալի գնահատման, այդ համատեքստում անարդյունավետ և ոչ հիմնավոր ներդրումների ծավալի բացահայտման և վերհանման առումով՝ սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագներում դրանք չներառելու սկզբունքից ելնելով: Այդ նպատակով հանձնաժողովը յուրաքանչյուր տարի քննարկում և համաձայնություն է տալիս էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների հաջորդ տարիների ներդրումային ծրագրերին, ինչպես նաև ամփոփում ընկերությունների նախորդ տարվա ներդրումային գործունեության արդյունքները և հրապարակում համապատասխան վերլուծական տեղեկանքներ:

Ներկայումս էներգետիկայի բնագավառում հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրեր են իրականացնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ



կորպորացիա» և «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունները: Բացի նշվածից արդիականացման ներդրումային ծրագիր է իրականացնում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Հրազդան-5» հիմնարկը:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրը միտված է Սևան-Հրազդանյան ՀԷԿ-երի կասկադի արդիականացմանը, հիդրոկառույցների վերականգնմանը և հետագա շահագործման համար ոչ պիտանի սարքավորումների փոխարինմանը, իսկ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունների ներդրումային ծրագրերը՝ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը, նոր սպառողների սպառման համակարգերի միացմանը, առևտրային հաշվառման համակարգերի կատարելագործմանը, հետագա շահագործման համար ոչ պիտանի սարքավորումների փոխարինմանը, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրմանը, ինչպես նաև ընկերությունների բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ այլ ներդրումների իրականացմանը: Հանձնաժողովն առանձնակի ուշադրություն է դարձնում էլեկտրական էներգիայի և բնական գազի բաշխման գործունեություն իրականացնող ընկերությունների ներդրումային ծրագրերի կառուցվածքին՝ ներդրումներն առաջնահերթ առավել վատթար վիճակում գտնվող բնակավայրերի սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանն ուղղելու նպատակով:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ 2016 թվականին հանձնաժողովը կքննարկի «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա» և «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությունների ներդրումային ծրագրերը, ինչպես նաև կամփոփի «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա» (այդ թվում՝ «Հրազդան 5»), «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների 2015 թվականի ներդրումային գործունեության արդյունքները: Քայլեր կձեռնարկվեն նաև բնագավառի կարգավորվող ընկերությունների հետագա զարգացումը խթանելու և նոր ներդրումներ ներգրավելու ուղղությամբ:

Հանձնաժողովը մշտապես հետևում է նաև իր կարգավորման դաշտում գործող

հանրային կազմակերպությունների իրականացվող գնումների արդյունավետությանն ու թափանցիկությանը՝ սպառողների առաքվող էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագների վրա ազդեցության տեսանկյունից: Վերջիններիս կողմից գնումների գործընթացի թափանցիկության ապահովման նպատակով իրականացվող գնումների մասին ողջ տեղեկատվությունը ներկայումս հրապարակվում է ինչպես ՀՀ ֆինանսների նախարարության գնումների էլեկտրոնային տեղեկագրում, այնպես և ընկերությունների պաշտոնական կայքերում:

Գնումների գործընթացի արդյունավետության բարձրացման և թափանցիկության ապահովման նպատակով 2014 թվականի ընթացքում հանձնաժողովը, համագործակցելով ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Ցածր արտանետումների ռազմավարություն և մաքուր էներգիայի զարգացում Եվրոպայում և Եվրասիայում» ծրագրի Հայաստանյան գրասենյակի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, սահմանել է իր հաստատած ցանկում ներառված հանրային կազմակերպությունների գնումների կարգերին ներկայացվող նոր միասնական լրացուցիչ պահանջներ, ինչպես նաև այդ կազմակերպությունների գնումների գործընթացի մոնիթորինգի կարգը, որում ամրագրված են մոնիթորինգի մեխանիզմները և գործիքները, իրականացման և արդյունքների հրապարակման պարբերականությունն ու ձևաչափը:

Գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների սահմանման, ինչպես նաև հետագա մոնիթորինգի ենթակա հանրային կազմակերպությունների ցանկում ներառված են հանրային ծառայությունների կարգավորման ոլորտում գործունեություն իրականացնող մասնավոր բաժնեմաս ունեցող այն ընկերությունները, որոնց կողմից իրականացվող գնումների արդյունավետությունը կարող է ազդեցություն ունենալ սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագների վրա: Այդ ցանկում մասնավորապես ներառված են էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ները, «Տրանսգազ» ՍՊԸ-ն և «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազԶԷԿ)» ԲԲԸ-ն, ինչպես նաև հեռահաղորդակցության

բնագավառում գործունեություն իրականացնող «ԱրմենՏել» ՓԲԸ-ն (միայն հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված ցանցի մասով): Նշված ցանկում չեն ներառվել 50 տոկոսից ավելի պետական բաժնեմաս ունեցող հանրային կազմակերպությունները, քանի որ նրանց կողմից իրականացվող գնումների գործընթացը կարգավորվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով:

2015 թվականի ընթացքում հանձնաժողովը, համաձայն հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգի՝ հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող անձանց կարիքներին համապատասխան ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների քանակի և ժամանակացույցի գնահատման նպատակով իրականացրել է նշված անձանց կողմից հրապարակվող գնումների պլանների մոնիթորինգ, որի արդյունքները կհրապարակվեն մոնիթորինգի աշխատանքներն ամփոփելուց հետո՝ մինչև ընթացիկ տարվա ավարտը: Նույն ժամանակահատվածում իրականացվել է նաև հանրային կազմակերպությունների գնումների առանձին գործարքների մոնիթորինգ, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրությունների, գործարքների համար կիրառվող գնման մեթոդների ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարների ընտրության ընթացակարգերի մոնիթորինգը: Հանրային կազմակերպությունների գնումների առանձին գործարքների մոնիթորինգի աշխատանքների ամփոփումը և հրապարակումը ևս նախատեսվում է ավարտել 2015 թվականի ընթացքում:

2016 թվականին հանձնաժողովը, համագործակցելով բոլոր շահագրգիռ կողմերի և միջազգային կազմակերպությունների հետ, կշարունակի աշխատանքները հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող անձանց կողմից փաստացի կատարված գնումների արդյունավետության ու թափանցիկության բարձրացման ուղղությամբ, կիրառելով նաև արդեն իսկ ներդրված մոնիթորինգի մեխանիզմները:

## **6. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն**

Կարգավորվող ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման համար: Այդ առումով կարևորվում է կարգավորվող ոլորտների ընկերություններում հաշվապահական հաշվառման հաշիվների և ենթահաշիվների նոր համակարգի ներդրումը, որը հնարավորություն է ընձեռում հստակ տարանջատել հիմնական (կարգավորվող) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կատարել եկամուտների և ծախսերի մանրամասն հաշվառում և վերլուծություն: Այս համակարգն արդեն ներդրված է էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և խմելու ջուր մատակարարող ընկերություններում, լրամշակվել են նշված ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը:

Հիշյալ աշխատանքների իրականացման արդյունքում կրճատվել են էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջրային համակարգի ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ծավալները և ներկայացման պարբերականությունները:

Ֆինանսական վերլուծության կազմակերպման և կատարելագործման, ֆինանսական վերլուծության նպատակաուղղվածության և արդյունավետության բարձրացման աշխատանքները շարունակական զարգացում կունենան նաև 2016 թվականին:

Ելնելով այն հանգամանքից, որ հանրային ծառայությունների կարգավորման ոլորտում ընդգրկված են ֆունկցիոնալ տարբեր բնույթի գործունեություն իրականացնող ընկերություններ, հանձնաժողովը սկսել է կարգավորվող ընկերություններում հաշվապահական հաշվառման անհատական հաշվային պլանների ներդրման գործընթաց: Այս ձեռնարկումը հանձնաժողովին հնարավորություն է տալիս կարգավորվող յուրաքանչյուր ընկերությունից ստանալ առավել մանրամասն և հասցեական տեղեկատվություն, արագ և դինամիկ կերպով

արձագանքել կարգավորվող ոլորտներում ընկերությունների կազմակերպարավական կառուցվածքների, նրանց գործառույթների շրջանակի, ինչպես նաև տնտեսական դաշտում օրենսդրական փոփոխություններին և համարժեք փոփոխություններ կատարել հաշվապահական հաշվառման հաշվային պլաններում:

Հաշվապահական հաշվառման անհատական հաշվային պլաններ արդեն ներդրվել են գազամատակարարման համակարգի կարգավորվող ընկերություններում, ինչպես նաև, դրանց համապատասխան՝ լրամշակվել են ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը:

Ներկայումս ընթացքի մեջ է էլեկտրաէներգետիկական համակարգի կարգավորվող ընկերությունների համար հաշվապահական հաշվառման անհատական հաշվային պլանների մշակման գործընթացը, որը նախատեսվում է ավարտել մինչև 2015 թվականի տարեվերջ, իսկ 2016 թվականից սկսած արդեն ընկերություններում փուլային եղանակով կներդրվեն և կգործեն հաշվապահական հաշվառման անհատական հաշվային պլաններ, որոնց հիման վրա կլրամշակվեն և էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների համար ևս կսահմանվեն հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների անհատական ձևեր:

Առաքված էլեկտրաէներգիայի և մատուցված ծառայությունների դիմաց էլեկտրաէներգետիկական համակարգի արտադրող կայաններին և ծառայություններ մատուցող ընկերություններին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետներում վճարումների ապահովման նպատակով 2016 թվականին ևս հանձնաժողովը կշարունակի վերահսկել սպառված էլեկտրաէներգիայի դիմաց սպառողներից գումարների հավաքագրման և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից ընկերություններին վճարումների կատարման ընթացքը:

2016 թվականի ընթացքում հանձնաժողովը սահմանված կարգով հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող ընկերություններից կստանա

ֆինանսական հաշվետվություններ և կկատարի համապատասխան վերլուծություններ:

Էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջրային համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով հանձնաժողովը կշարունակի իր վեբ կայքում ([www.psrc.am](http://www.psrc.am)) հրապարակել կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները:

## **7. Հանձնաժողովի հիմնական գործունեության ընթացիկ ուղղություններ**

Հանձնաժողովի՝ օրենսդրությամբ սահմանված պարտականությունների կատարմանն են ուղղված նրա գործունեության ընթացիկ ուղղությունները:

Հանձնաժողովն իր իրավասությունների շրջանակում որոշումներն ընդունում է նիստերի միջոցով, որոնք դռնբաց են և գործնականում անցկացվում են ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ: Հանձնաժողովը նախապես հայտարարում է նիստերի անցկացման տեղի և ժամի մասին, հնարավորություն ընձեռում շահագրգիռ անձանց և հանրության ներկայացուցիչներին մասնակցել նիստերին, ստանալ օրակարգն ու քննարկվող նյութերը, ներկայացնել տեղեկություններ և հանդես գալ ելույթներով: 2015 թվականի հունվարի 1-ից սեպտեմբերի 1-ն ընկած ժամակահատվածում հրավիրվել է հանձնաժողովի 56 նիստ և ընդունվել 313 որոշում: Այս գործընթացը, բնականաբար, ունի շարունակական բնույթ և կիրականացվի նաև 2016 թվականին:

Մինչույն ժամանակ, հանձնաժողովը տարբեր կազմակերպություններից և անհատներից ստանում է տարաբնույթ գրություններ՝ պարզաբանումներ ստանալու կամ կարգավորվող ընկերությունների հետ առաջացած վեճերի լուծման վերաբերյալ: 2015 թվականի հունվարի 1-ից սեպտեմբերի 1-ն ընկած ժամակահատվածում արդեն իսկ ստացվել է 3474 գրություն, որոնցում բարձրացված հարցերին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրվել են համապատասխան լուծումներ և պարզաբանումներ: Ընդհանուր առմամբ, այդ նույն ժամանակահատվածում տարբեր կազմակերպությունների և անհատների է ուղարկվել հանձնաժողովի 2465 գրություն: 2016 թվականին այս ուղղությամբ տարվող աշխատանքները, բնականաբար, կունենան շարունակական բնույթ:

Կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից հանձնաժողով են ներկայացվում հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում ծառայությունների մատուցման (գործունեության իրականացում) առնչվող գրավոր, բանավոր (ներկայացվում է հանձնաժողովի թեժ գծի հեռախոսահամարով կամ այցելելով հանձնաժողով) կամ էլեկտրոնային եղանակով դիմումներ (բողոք, հարցադրում, տեղեկատվություն ստանալու հարցում, առաջարկություն)` պարզաբանումներ ստանալու կամ հանրային ծառայություններ մատուցող ընկերությունների հետ առաջացած վեճերի լուծման վերաբերյալ: Դիմումները քննարկվում են սահմանված ընթացակարգերով, և բոլոր դիմումներին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրվում են համապատասխան լուծումներ և պարզաբանումներ: Հանձնաժողովում գործող թեժ գծի հեռախոսահամարով կազմակերպությունները և անհատները խորհրդատվություն են ստանում մատակարար-սպառող հարաբերություններում իրենց իրավունքների և պարտականությունների, դրանց խախտման դեպքում անհրաժեշտ քայլերի և գործողությունների վերաբերյալ:

2015 թվականի մայիս ամսից հանձնաժողովի պաշտոնական կայքում գործում է «Հետևել դիմումի ընթացքին» բաժինը, որը դիմումատուին հնարավորություն է տալիս առցանց հետևելու իր դիմումի քննարկման ընթացքին: Հանձնաժողով ներկայացված դիմումների քննարկման ընթացքի վերաբերյալ տարեկան հաշվետվությունը մինչև հաջորդ տարվա առաջին եռամսյակի ավարտը հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Դիմումների քննարկումը և քննարկման գործընթացին առցանց համակարգով դիմումատուի ներգրավմանը, գործընթացի հետագա բարելավմանը և արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքները շարունակական են և գտնվում է հանձնաժողովի մշտական ուշադրության կենտրոնում:

Բացի այդ, Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների կայունության զարգացման աջակցություն» ծրագրի շրջանակում, նպատակ ունենալով բարձրացնել սպառողների իրազեկվածությունը, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման

վերաբերյալ հանձնաժողով ներկայացրած դիմումների և դրանց քննարկման գործընթացի մասին տարեկան տեղեկատվությունը մինչև հաջորդ տարվա մայիսի 31-ը հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Հանձնաժողովի ընթացիկ գործունեությունը պատշաճ լուսաբանելու և հանրությանն առավել ընկալելի ներկայացնելու նպատակով հանձնաժողովը մշտապես համագործակցում է զանգվածային լրատվամիջոցների հետ: Շարունակելով զարգացնել թափանցիկ և հրապարակային աշխատանքը, 2016 թվականին հանձնաժողովը կփորձի առավելագույնս նպաստել հանրության բոլոր շերտերի իրազեկվածության մակարդակի բարձրացմանը: Այդ նպատակով գալիք տարվա համար ծրագրվում է առավել ակտիվ և նախաձեռնող մարտավարություն: Հանձնաժողովի դիտակետում կլինի հանրության հետ հետադարձ կապի ապահովման խնդիրը, սահմանված կարգով և ժամկետներում պատասխաններ կտրվեն բարձրացված գրավոր և բանավոր հարցերին, լրատվամիջոցների համար պարբերաբար կթողարկվեն համառոտ ծանուցումներ, կտրվեն մամուլ հաղորդագրություններ, հանձնաժողովի նիստերի մասին ամփոփիչ տեղեկանքներ: Հանձնաժողովի գործունեության և հանրային ընկալման առումով հետաքրքրություն ներկայացնող որոշումների մասին պաշտոնական տեղեկատվությունները կհրապարակվեն մամուլում և էլեկտրոնային լրատվամիջոցներով: Ինչպես նախորդ տարիներին, 2016 թվականին նույնպես տեղեկատվության տարածումը կընդգրկի հանրապետության ողջ տարածքը: Հանձնաժողովի անդամները և աշխատակազմի մասնագետները հանրային հնչեղություն ունեցող խնդիրների շուրջ պարբերաբար հանդես կգան ճանաչողական բնույթի հաղորդումներով, պարզաբանումներով և հարցազրույցներով: Կշարունակվի մամուլի հրապարակումների ամենօրյա վերլուծությունը. հանձնաժողովի և կարգավորվող ոլորտների գործունեության մասին հրապարակումները կներկայացվեն աշխատակազմին՝ դրանով իսկ դիտարկելի դարձնելով ծառայություններ մատուցող ընկերությունների և հանրության կարծիքն ու գնահատականը:

Հանձնաժողովը մշտապես համագործակցում է սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ, որոնց



ներկայացուցիչները պարբերաբար մասնակցում են հանրային շահի տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկմանը, ներկայացնում իրենց դիրքորոշումը, դիտողություններն ու առաջարկությունները: Նրանք մասնակցում են նաև հանձնաժողովի նիստերին և հարցերի ու էլոյթների միջոցով ներկայացնում սեփական կամ հանրության տեսակետը քննարկվող հարցերի առնչությամբ: Ավանդույթ դարձած երկխոսության այս արդյունավետ ձևաչափը շարունակություն կունենա նաև 2016 թվականին:

Հանձնաժողովի կարգավորման դաշտում գործող ընկերություններն ապահովում են ՀՀ պետական բյուջեի զգալի մուտքեր՝ լիցենզիաների (թույլտվությունների) սուրքերի, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման վճարների, կարգավորման պարտադիր վճարների, ինչպես նաև փոքր հիդրոէլեկտրակայանները լիցենզիաներով ամրագրված ժամանակահատվածում չգործարկելու կամ լիցենզիայի պայմանները ոչ պատշաճ կատարելու համար գանձվող ֆինանսական երաշխիքների գծով վճարումների հաշվին: Ակնկալվում է, որ 2015 թվականին նշված աղբյուրներից ՀՀ պետական բյուջե կփոխանցվի շուրջ 6,8 մլրդ դրամ, որի հիմնական մասը՝ շուրջ 5,7 մլրդ դրամը, կկազմեն ռադիոհաճախականությունների օգտագործման և թույլտվությունների տրամադրման գծով մուտքերը: Ըստ կանխատեսումների՝ 2016 թվականին նշված աղբյուրներից ՀՀ պետական բյուջե կփոխանցվի շուրջ 7 մլրդ դրամ, որից ռադիոհաճախականությունների օգտագործման և թույլտվությունների տրամադրման գծով մուտքերը կկազմեն շուրջ 5,7 մլրդ դրամ:

## **ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ**

### **1. Էներգետիկայի բնագավառ**

#### **1.1 Մեծածախ շուկայի մասնակիցների հարաբերությունները կարգավորող գործիքների կատարելագործում**

«Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում

փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-98-Ն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ մշակել են էլեկտրաէներգետիկական համակարգում վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակներում էլեկտրական էներգիայի ներկրման և արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով էլեկտրական էներգիայի տարանցիկ փոխադրման կարգերը, ինչպես նաև համապատասխան փոփոխություններ են կատարվել էլեկտրական էներգիայի արտահանման կարգում և վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկայում:

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի և հանձնաժողովի 2002 թվականի համապատասխան որոշմամբ հաստատված՝ էլեկտրամատակարարման անխուսափելի սահմանափակումներ պահանջող իրավիճակներում էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց կողմից իրականացվելիք գործողությունների ծրագրերի մշակման կարգի համաձայն, 2015 թվականին հանձնաժողովի կողմից վերանայվել և ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության հետ համատեղ հաստատվել են «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ների համատեղ մշակված էլեկտրամատակարարման անխուսափելի սահմանափակումներ պահանջող իրավիճակներում կիրառվող գործողությունների նոր ծրագրերը:

Նպատակ ունենալով օպտիմալացնել էլեկտրաէներգիայի հաշվառման միջոցների տեղակայման և շահագործման ընթացակարգերը, ինչպես նաև հստակեցնելու «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի և էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցների հարաբերությունները վերը նշված գործընթացում, լրամշակվել է հանձնաժողովի 2006 թվականի՝ այդ առնչությամբ ընդունված որոշումը:

Էլեկտրաէներգիայի բաշխման ցանցերում տեխնոլոգիական անխուսափելի կորուստների հաշվարկի գործընթացի թափանցիկության և արդյունավետության բարձրացման նպատակով հանձնաժողովը՝ համապատասխան փոփոխություն

կատարելով «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի լիցենզիայի պայմաններում, ամրագրել է վերջինիս կողմից բաշխման ցանցի տեխնոլոգիական անխուսափելի կորուստների հաշվարկման պարտականությունը: Արդյունքում՝ հաղորդման և բաշխման ցանցերում էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական անխուսափելի կորուստների հաշվարկման ողջ գործընթացը կհամակարգվի մեկ ընկերության՝ «Հաշվարկային կենտրոնի» կողմից: Հաղորդման և բաշխման ցանցերում էլեկտրաէներգիայի անխուսափելի տեխնոլոգիական կորուստների մեծությունների հաշվարկման և «հաղորդող-հաշվարկային կենտրոն», «բաշխող-հաշվարկային կենտրոն» կողմերի փոխհարաբերությունները հստակեցնելու նպատակով հաստատվել է շուկայի կանոն հանդիսացող՝ հաղորդման և բաշխման ցանցերում էլեկտրական էներգիայի անխուսափելի տեխնոլոգիական կորուստների մեծությունների հաշվարկման կարգը:

## **1.2 Մատակարարների և սպառողների հարաբերությունները կարգավորող գործիքների կատարելագործում**

2015 թվականին շարունակվում է էլեկտրական էներգիայի ու բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները լրամշակելու գործընթացը:

Բնակիչ-բաժանորդներին մատակարարված բնական գազի ծախսի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման այլընտրանքային եղանակների ներդրման նպատակով լրամշակվել են բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները: Արդյունքում՝ 2016 թվականի հունիսի 1-ից բնակիչ-բաժանորդերն իրենց նախընտրած եղանակով (փոստով՝ գրավոր կամ էլեկտրոնային փոստով) հնարավորություն կունենան ծանոթանալ նախորդ հաշվարկային ամսում մատակարարված գազի քանակի և արժեքի հաշվարկման ընթացքում օգտագործված բոլոր ցուցանիշներին: Միևնույն ժամանակ, կատարված մեկ այլ փոփոխության արդյունքում հնարավորություն է ընձեռվել բաժանորդներին՝ անվճար, էլեկտրոնային եղանակով ծանոթանալ մատակարարված բնական գազի քանակի և արժեքի մասին տեղեկատվությանը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի վեբ-կայքի միջոցով (առցանց)՝ առնվազն մեկ տարի ժամանակահատվածի համար: Նշված փոփոխությունն ուժի մեջ կմտնի 2016 թվականի հունիսի 1-ից՝ նկատի ունենալով ընկերության բնական գազի իրացման նոր առցանց ծրագրի ներդրման աշխատանքների ավարտի ժամկետը:

Հարկ է նշել, որ այս համակարգը արդեն իսկ ներդրված է էլեկտրական էներգիայի սպառողների համար:

Բացի այդ, բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում ներդրվել են նոր մեխանիզմներ, որոնց արդյունքում բնական գազ սպառողները իրավունք կունենան, որպես այլընտրանքային միջոց, իրենց գազասպառման համակարգին ամրակցված առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության ստուգումը սեփական միջոցների հաշվին պատվիրելու հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման իրավունք ունեցող ցանկացած այլ կազմակերպությունների ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքում, այնպես էլ դրանից դուրս: Բոլոր դեպքերում առևտրային հաշվառքի սարքի փորձաքննության արդյունքների մասին իրավասու կազմակերպության եզրակացությունը պետք է հաստատված լինի Հայաստանի Հանրապետության չափագիտական մարմնի կողմից: Այն դեպքում, երբ ներկայացված փորձաքննական եզրակացությամբ կփաստվի առևտրային հաշվառքի սարքի խախտում՝ մատակարարը պարտավոր կլինի իրականացնել բաժանորդի կողմից սպառված բնական գազի քանակի և արժեքի վերահաշվարկ: Հարկ է նշել, որ նույն սկզբունքներն արդեն իսկ գործում են էլեկտրական էներգիա սպառողների համար:

Նախատեսվում է նաև շարունակել էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների լրամշակման աշխատանքները: Կհստակեցվեն սպառողի սեփականությունը հանդիսացող էլեկտրատեղակայանքներին միացված ենթասպառողներին էլեկտրական էներգիայի տարանցման համար տեխնոլոգիական կորուստների հաշվարկման մեխանիզմները: Նախատեսվում է նաև սպասարկման որակի խախտման դեպքերում ավելացնել մատակարարի կողմից սպառողին վճարվող տույժի չափը, սահմանելով այն սպառված էլեկտրաէներգիայի միջին ամսական արժեքի 50 տոկոսի չափով (ներկայիս 20 տոկոսի փոխարեն), բայց ոչ ավելի, քան 2500 դրամը (ներկայիս 2000 դրամի փոխարեն):

2016 թվականին կշարունակվեն էլեկտրական էներգիայի և բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների կատարելագործման աշխատանքները՝ մատակարար-սպառող հարաբերություններում էլեկտրոնային

տարբեր գործիքների ներդրման, այդ թվում՝ կիրառվող վճարային համակարգերի կատարելագործման նպատակով: 2016 թվականին նախատեսվում է նաև լրամշակել էլեկտրական էներգիայի մատակարարման (Մատակարար-Սպառող (բացառությամբ՝ բնակչության)) պայմանագրի օրինակելի ձևը:

### **1.3 Վերականգնվող էներգետիկայի բնագավառի զարգացման միտումները**

Վերականգնվող էներգետիկայի բնագավառի զարգացման միտումները ևս մշտապես գտնվում են հանձնաժողովի ուշադրության կենտրոնում: Հայաստանի Հանրապետությունում վերականգնվող էներգետիկայի բնագավառի ճյուղերից ամենազարգացածը թերևս փոքր հիդրոէներգետիկան է:

2015 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ հանրապետությունում գործում է 173 փոքր հիդրոէլեկտրակայան, ևս 38-ը գտնվում է կառուցման փուլում: Գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 300 ՄՎտ, և դրանք միջին տարեկան հաշվով կարող են արտադրել շուրջ 844 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է 95 ՄՎտ, և ակնկալվում է, որ գործարկումից հետո դրանք միջին տարեկան հաշվով կարտադրեն շուրջ 322 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Այսպիսով, կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գործարկումից հետո հանրապետությունում կգործեն 211 փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնք կունենան գումարային 395 ՄՎտ հզորություն և միջին տարեկան հաշվով կարտադրեն շուրջ 1,17 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիա, որը Հրազդանի 5-րդ էներգաբլոկում արտադրելու դեպքում կծախսվեր շուրջ 320 մլն մ<sup>3</sup> բնական գազ:

Հանձնաժողովը միաժամանակ հետևում է դրանց կառուցման ընթացքին՝ համապատասխան պատժամիջոցներ կիրառելով իրենց պարտավորությունները պատշաճ կարգով չկատարող ընկերությունների նկատմամբ: 2015 թվականին՝ մինչև սեպտեմբերի 1-ը, լիցենզիայի պայմանները ոչ պատշաճ կատարելու և լիցենզիայի պայմաններով սահմանված ժամկետներում փոքր հիդրոէլեկտրակայանները չգործարկելու համար կայացվել է ընկերություններին ֆինանսական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 18 որոշում:

Վերականգնվող էներգետիկայի մյուս բոլոր ճյուղերում այս պահին շոշափելի զարգացումներ դեռևս չկան: Հանրապետությունում ներկայումս գործում է 3 հողմակայան՝ 2,6 Մվտ հզորությամբ, ևս 3-ը՝ շուրջ 19 ՄՎտ հզորությամբ, գտնվում են կառուցման փուլում: Գործում են նաև 0.8 Մվտ հզորությամբ կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող մեկ կայան և մի քանի շատ փոքր հզորություններ ունեցող արևային էլեկտրակայաններ: Հանձնաժողովը, համագործակցելով ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության հետ, փորձում է քայլեր ձեռնարկել վերականգնվող էներգետիկայի այս ճյուղերում ևս ներդրումներ ներգրավելու նպատակով: Սակայն հարկ է նշել, որ նման աղբյուրներից արտադրվող էլեկտրական էներգիայի կանխատեսվող գների ներկայիս մակարդակը դեռևս մրցունակ չէ ավանդական կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի գների համեմատությամբ: Ուստի այս ոլորտում ներդրումները պետք է խթանվեն համաչափորեն՝ հաշվի առնելով սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի գների վրա դրանց հնարավոր ազդեցությունը:

## **2. Ջրային ոլորտ**

Շարունակական բնույթ են կրում խմելու ջուր մատակարարող ընկերություններին ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների առավել հստակեցման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Յուրաքանչյուր տարի «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ները հանձնաժողովի հաստատմանն են ներկայացնում սպառողների ջրամատակարարման տևողության փաստացի մեծությունները՝ տվյալ տարեսկզբի դրությամբ և դրանց ծրագրային մեծությունները՝ հաջորդ տարեսկզբի համար: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս առաջնահերթ բարելավել առավել վատթար վիճակում գտնվող սպառողների ջրամատակարարման տևողության ցուցանիշները:

Ինչպես արդեն հայտնի է, պետական-մասնավոր գործընկերության հետագա զարգացմանն ուղղված՝ ՀՀ-ում խմելու ջրի ոլորտում իրականացվող 2-րդ սերնդի բարեփոխումների շրջանակում ՀՀ կառավարությունը նախապատրաստում է 2017

թվականի հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում ջրամատակարարման ծառայությունները մատուցումը իրականացնել «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունների միավորման արդյունքում ձևավորվելիք մեկ ընկերության (օպերատորի) կողմից: Այս հանգամանքով պայմանավորված՝ 2016 թվականին ջրային ոլորտում հանձնաժողովի հիմնական ջանքերն ուղղված կլինեն նշված գործընթացին համահունչ իր կարգավորման գործիքների վերանայմանը և կատարելագործմանը:

### **3. Հեռահաղորդակցության բնագավառ**

Հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության գերակայությունները, 2015 թվականին աշխատանքներ են իրականացվել էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի դինամիկ և համաչափ զարգացման, մրցակցության խթանման, գործարար և ներդրումային միջավայրի բարելավման, բաժանորդների իրավունքների և շահերի պաշտպանության, էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության ապահովման, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ, մասնավորապես.

- «ԱրմենՏել» ՓԲԸ-ին տրամադրված լիցենզիայով ստանձնած պարտավորության կատարման՝ ՀՀ մարզերում CDMA անլար տեխնոլոգիայի հիման վրա գործող հեռախոսագծերի արդիականացման գործընթացի շրջանակում հանձնաժողովի կողմից ընդունվել որոշումներով սահմանվել է, որ մինչև 2016 թվականի սեպտեմբերի 1-ը ընկերությունը պետք է լիցենզիոն պարտավորությամբ սահմանված՝ հեռախոսագծերի արդիականացման ենթակա թվով 376 բնակավայրերը, ամրակցված հիմնական հեռախոսային ծառայությունների հետ մեկտեղ ապահովի ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման հնարավորությամբ՝ օգտագործելով անլար տեխնոլոգիա և ամրակցված վերջնակետային սարքավորումներ, իսկ մնացած բնակավայրերում

հեռախոսագծերն արդիականացնի կամ փոխարինի այլ տեխնոլոգիական լուծումներով՝ մինչև 2017 թվականի սեպտեմբերի 1-ը:

- Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության ապահովման և ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքում 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ բոլոր համայնքները և միջպետական ավտոճանապարհների մոտ 97%-ն ապահովված են առնվազն մեկ օպերատորի հանրային շարժական կապի ծածկույթով: Ընդ որում, ՀՀ համայնքների 4,7%-ը ապահովված են 1 օպերատորի, 18,7%-ը՝ 2 օպերատորների և 76,6%-ը 3 օպերատորների հանրային շարժական կապի ծածկույթով: Հարկ է նշել, որ ՀՀ բնակավայրերի 99,2%-ն ապահովված են հանրային շարժական բջջային կապի 3G տեխնոլոգիայի ծածկույթով:
- Լրամշակվել և հանձնաժողովի 2015 թվականի մարտի 4-ի համապատասխան որոշմամբ հաստատվել է այլ կարգավորվող անձանց հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված ցանցերով էլքային ձայնային ծառայությունների մատուցման կարգը, որի համաձայն ծանուցում ներկայացրած ձայնային ծառայություններ մատուցողները հնարավորություն ունեն հանձնաժողովի կողմից իրենց տրամադրված համարը գործարկել իրենց նախընտրած այն օպերատորի ցանցում, որն առանձնացրել է տվյալ համարն իր զբաղեցրած համարային ռեսուրսից:
- Լրամշակվել և արդիականացվել է տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մասին հաշվետվության ձևը:
- ՀՀ մարզերում արտակարգ պատահարների արագ արձագանքման «911» հատուկ ծառայության հասանելիության արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների արդյունքում ներկայումս ՀՀ բոլոր մարզերում դեպի արտակարգ պատահարների արագ արձագանքման «911» հատուկ ծառայություն կատարվող զանգերն ուղղորդվում են համապատասխան մարզային ճգնաժամային կառավարման կենտրոններ:



- Հանձնաժողովի համապատասխան որոշմամբ սահմանվել են հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորների կողմից մատուցվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հաշվառման որոշ սկզբունքներ: Մասնավորապես, սահմանվել են օպերատորների կողմից առաջարկվող «սակագնային պլան» և «ծառայությունների փաթեթ» հասկացությունները, դրանց սակագներում ներառված ծառայությունները, ինչպես նաև օպերատորների հաշիվների վարման (բիլինգ) համակարգի հաշվառման սկզբունքներ:

Հանձնաժողովի կողմից հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև մրցակցության զարգացմանը նպաստելու և տեխնոլոգիական չեզոքություն պահպանելու կարգավորման քաղաքականության արդյունքում 2015 թվականին՝

- Երևան քաղաքում ամրակցված հեռախոսացանցի թվայնացման մակարդակը հասցվել է 100%-ի, իսկ Հայաստանի Հանրապետությունում՝ 88,5 %-ի,
- Երևան, Գյումրի, Վանաձոր, Դիլիջան, Արմավիր, Էջմիածին և Ծաղկաձոր քաղաքներում գործում են 4G/LTE տեխնոլոգիայի վրա հիմնված ցանցեր: 2016 թվականի ընթացքում նախատեսվում է դրանց ընդլայնումը նաև այլ բնակավայրերում,
- իրականացված լայնամասշտաբ աշխատանքների արդյունքում Երևան, Գյումրի, Վանաձոր, Կապան, Հրազդան, Աբովյան, Աշտարակ, Չարենցավան, Արմավիր, Էջմիածին, Ալավերդի, Արարատ, Արտաշատ, Դիլիջան, Իջևան, Մասիս, Սևան, Քաջարան, Ագարակ և Մեծամոր քաղաքներում հասանելի են դարձել FTTx տեխնոլոգիայի վրա հիմնված օպտիկամանրաթելային ցանցերը: 2016 թվականին այդ ցանցերի ներդրմանն ուղղված աշխատանքները կշարունակվեն նաև հանրապետության այլ մարզային բնակավայրերում,
- առաջին կիսամյակի դրությամբ միջազգային «ԱյՓի» տարանցման հոսքերի թողունակությունը հանրապետությունում կազմել է 170258Մբիթ/վ, որը 2014 թվականի համեմատությամբ աճել է 2 անգամ,
- մրցակցության արդյունքում միջազգային «ԱյՓի» տարանցման ծառայության հոսքերի աճի շնորհիվ նվազել է նաև այդ ծառայության սակագինը:

Մասնավորապես, 2015 թվականի առաջին կիսամյակի դրությամբ նշված սակագինը կազմել է 4755 դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով մոտ 10%-ով,

- ինտերնետ հասանելիության ծառայությունների բաժանորդների քանակը, (այդ թվում՝ շարժական 3G և GPRS բաժանորդները) առաջին կիսամյակի դրությամբ կազմել է 2122727,
- ՀՀ-ում աճել են լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայության մատուցման ծավալները, որի բաժանորդների քանակը (առանց GPRS բաժանորդների) 2015 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 1 515 506:

Հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության գերակայությունները, հանձնաժողովը՝ գործելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջա-նակում, 2016 թվականին շարունակելու է ոլորտում արդար և բաց մրցակցության երաշխավորման և էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության աշխարհագրության մեծացման և մատչելիության ապահովման, ինչպես նաև գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

2016 թվականի ընթացքում շարունակվելու է ամրակցված հեռախոսային ցանցերի թվայնացման գործընթացը մարզերում:

Հանձնաժողովը 2016 թվականին հետևելու է «ԱրմենՏել» ՓԲԸ-ին տրամադրված լիցենզիայով ստանձնած պարտավորության կատարման՝ մարզերում CDMA անլար տեխնոլոգիայի հիման վրա գործող հեռախոսագծերի արդիականացման գործընթացին, որի արդյունքում հնարավորություն կընձեռվի տվյալ հեռախոսագծերով ստանալ լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություններ:

Հանձնաժողովն առաջիկա տարում հետևելու է «Յուբոմ» ՍՊԸ-ին տրամադրված հանրային ամրակցված հեռախոսային ցանցի տարածաշրջանային կողերի և նրանց համարային շարքերի զբաղեցման թույլտվության պայմաններով ամրագրված պարտավորությունների, մասնավորապես, ժամանակացույցով սահմանված

բնակավայրերում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի զարգացման և համապատասխան աշխարհագրական տարածքները հանրային ամրակցված հեռախոսային ծառայությունների մատուցմամբ ապահովվման աշխատանքների պատշաճ կատարման ընթացքին:

Միաժամանակ, հետևողական աշխատանքներն կիրականացվեն նաև «Յուքոմ» ՍՊԸ-ին 801-811ՄՀց և 842-852ՄՀց ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությամբ սահմանված պարտավորությունների կատարման վերահսկման նպատակով: Նշված պարտավորությունների կատարումը կնպաստի ՀՀ մարզերում նորագույն (չորրորդ սերնդի LTE) տեխնոլոգիաների ներդրմամբ հեռահաղորդակցության ենթակառուցվածքների զարգացմանը, մրցակցության խթանմանը, ինչպես նաև լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման ապահովմանը:

Հիմք ընդունելով հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 24-ի՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունները դասակարգելու և հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների շուկաները սահմանելու մասին որոշումը, գերիշխող դիրքի առկայության ուսումնասիրության նպատակով 2016 թվականին համապատասխան վերլուծություններ կիրականացվեն կարգավորման ենթակա առանձին շուկաներում գերիշխող դիրք ունեցող օպերատորների նկատմամբ՝ կիրառելով օրենքով ամրագրված պարտավորություններ:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ  
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ**

Հանձնաժողովը մշտապես համագործակցում է այլ երկրների կարգավորող մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ:

Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում միջազգային լավագույն փորձն ուսումնասիրելու և Հայաստանի Հանրապետությունում այն կիրառելու կամ կիրառման հնարավորությունները դիտարկելու նպատակով հանձնաժողովը համագործակցում է տարբեր միջազգային կառույցների հետ: Մասնավորապես, համատեղ աշխատանքներ են տարվում Համաշխարհային բանկի, Վերակառուցման

և զարգացման եվրոպական բանկի, Ասիական զարգացման բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID), ԱՄՆ կարգավորող հանձնաժողովների ասոցիացիայի (NARUC), Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU), Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ընկերակցության (ERRA) և Եվրոպական Միության հովանու ներքո գործող Ինոգեյթ ծրագրի հետ: Հաջորդ տարում ևս նախատեսվում է շարունակել համագործակցությունը նշված կառույցների հետ, մասնակցել Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ընկերակցության (ERRA) հերթական հանդիպումներին և նիստերին, համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Կրթության զարգացման ակադեմիայի կողմից կազմակերպվող սեմինարներին:

Հեռահաղորդակցության ոլորտի զարգացման միջազգային փորձն ուսումնասիրելու և տեղայնացնելու նպատակով հանձնաժողովը կշարունակի ակտիվ համագործակցությունը Հեռահաղորդակցության միջազգային միության, Կապի տարածաշրջանային համագործակցության հետ: Կշարունակվի համագործակցությունը նաև Եվրամիության Արևելյան Գործընկերության ծրագրի շրջանակում ստեղծված էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորողների խմբում ընդգրկված 5 անդամ երկրների կարգավորող մարմինների հետ:

Հանձնաժողովը ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, ԱՄՆ կարգավորող հանձնաժողովների ասոցիացիայի հովանավորությամբ մասնակցում է նաև այլ երկրների, մասնավորապես՝ Մոլդովայի, Ուկրաինայի և Վրաստանի Էներգետիկայի բնագավառը և ջրային համակարգը կարգավորող մարմինների փորձի փոխանակման գործընթացին, որը կշարունակվի նաև 2016 թվականին:

Արդյունավետ համագործակցություն է իրականացվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի հետ: Համատեղ աշխատանքների արդյունքում զգալիորեն բարեփոխվել է ոլորտը կարգավորող օրենսդրությունը, բարելավվել է գործարար միջավայրը, մասնավորապես՝ պարզեցվել են թույլտվությունների տրամադրման ընթացակարգերը, կրճատվել է

վարչարարությունը: 2016 թվականին համագործակցությունը կշարունակվի նաև հեռահաղորդակցության բնագավառի զարգացման ուղղությամբ: